

ԱՆԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ

Հայոց միջնադարեան նշանաւոր մայրաքաղաք՝ Անիի պատմութեան հետազոտողները համեմատաբար սակաւ ուշադրութիւն են դարձրել քաղաքի հոգեւոր-եկեղեցական կեանքին: Այս բացը լրացնելու համար, մենք արդէն անդրադարձել ենք Հայոց կաթողիկոսական Աթոռի անիական շրջանի պատմութեան, Անիի եւ Հռոմկլայի ժԲ. դարի փոխարարեբուծիւններին, ինչպէս նաեւ քաղաքի հոգեւոր կեանքի ու եկեղեցական մշակոյթի որոշ հարցերին¹: Ստորեւ կը ներկայացնենք Անիի Եպիսկոպոսական Աթոռի համառօտ պատմութիւնը, կազմելով նաեւ քաղաքի եպիսկոպոսների գաւազանագիրքը: Այս ուղղութեամբ կատարուած առաջին եւ ցայժմ միակ աշխատանքը պատկանում է բազմամաստակ Հ. Ղ. Ալիշանին, որ «Միլլալ» համապատմի մէջ (Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 96), իր ժամանակ յայտնի տեղեկութիւնների հիման վրայ կազմել է քաղաքի եպիսկոպոսների ցանկը, որ սակայն, այսօրուան աղբիւրագիտական տուեալների տեսակէտից, ամբողջական չէ:

Անիի եպիսկոպոս աթոռի պատմութեան ուսումնասիրութիւնը մեծապէս լրացնում ու հարստացնում է քաղաքի յատկապէս ժԳ-ժԴ դարերի ընդհանուր պատմութիւնը, բացայայտում Անիի հասարակական եւ եկեղեցական կեանքի որոշ իւրայատկութիւնները, աթոռակալների տոհմական ծագումը եւ այլն: Նիւթը հետազօտելիս՝ մեր հիմնական սկզբնաղբիւրներն են եղել քաղաքի եւ մերձակայ վանքերի վիմագիր արձանագրութիւններն ու ձեռագրերի յիշատակարանները, քանի որ պատմիչների մօտ շատ քիչ տեղեկութիւններ են պահպանուել:

1. ՄԱԹԵԻՈՍԵԱՆ Կ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ քաղաքային Անի, «Եջմիածին», 1992, Ը., էջ 38-45, Թ-Ժ-Ա, էջ 115-125, 1993, Ա-Բ-Գ, էջ 119-134: Անի քաղաքի գրչութեամ կենտրոնը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1988, թիւ 1, էջ 132-137, Հոգեւոր Անի, «Գարուն», 1991, թիւ 10, էջ 26-29, Սարգիս վարդապետ Անեցի, «Անի», 1992, թիւ 1, էջ 40-47, MATEVOSYAN K., *Scriptoria et bibliothèques d'Ani*, Revue des Etudes Arméniennes, vol. XX, Paris, 1986-1987, p. 209-221.

961 թուին մայրաքաղաք դառնալուց յետոյ, Անին անկասկած ունեցել է եպիսկոպոս՝ քաղաքի հոգեւոր պետ: Իսկ երբ որոշ ժամանակ անց (992ին) մայրաքաղաքը դարձել է նաեւ կաթողիկոսանիւստ, ուր, ըստ Մատթէոս Ուռհայեցու՝ «երկոտասան եպիսկոպոսք ... ի տան հայրապետին անպակաս լինէր»², հաւանաբար այդ տասներկուսից մէկին է յանձնարարուել քաղաքի ներքին եկեղեցական կեանքի տնօրինութիւնը: Սակայն, Անիի եւ Շիրակի եպիսկոպոսութիւնը, որպէս Հայաստանեայց եկեղեցու առանձին հոգեւոր ու վարչատարածքային միաւոր, ինչպէս երեւում է, կազմաւորուել է 1072ին՝ Բարսեղ Ա. Անեցու ձեռնադրութեան ժամանակ: Այդ շրջանում, բիւզանդական կարճատեւ տիրապետութիւնից (որի հենց սկզբում, փաստօրէն, վերացուեց Անիի Կաթողիկոսական Աթոռը) եւ 1064ին սելջուքեան աւերածութիւնից յետոյ, Մանուչէ ամիրայի իշխանութեան տակ անցած քաղաքն աստիճանաբար սկսում էր ոտքի կանգնել, վերականգնելով նաեւ եկեղեցական կեանքի բնականոն վիճակը:

1072ին, ծերացած մօրն այցելելու նպատակով՝ Հայաստան եկած կաթողիկոս Գրիգոր Բ. Վկայասէրը գալիս է նաեւ Անի եւ այստեղ Անի քաղաքի ու Շիրակ գաւառի արքեպիսկոպոս է ձեռնադրում իր քրոջ որդի՝ Բարսեղին: Այդ մասին հնագոյն Յայսմաւուրքներից մէկում կարդում ենք. «... Գրիգորիս եկն յԱրեւելս... եւ օրհնեաց զմիւս քուերորդին (sic) իւր զտէր Բարսեղ՝ արքեպիսկոպոս Անոյ եւ Տանն Շիրակաւանոյ»³: Բարսեղը, որ բաւական լայն լիազօրութիւններով էր օժտուել, 1081ին Վկայասէրի համաձայնութեամբ Հաղբատում Կաթողիկոս է ձեռնադրում, գալիս Անի եւ մի կարճ ժամանակաշրջան, մինչեւ 1105, վերականգնում տեղի կաթողիկոսութիւնը, ապա գործն թափելով դիմելով հնազանդութեան է բերում այդ շրջանում առաջացած կաթողիկոսութիւնները եւ այլն⁴: Գրիգոր Վկայասէրի մահից յետոյ, 1105ին, Բարսեղ Ա. Անեցին հաստատուում է Գեոսունի Կարմիր Վանքում, ուր եւ մահանում է 1113ին:

Յայտնի չէ, թէ Բարսեղի մահից յետոյ, մինչեւ նրա եղբոր՝ Գրիգոր իշխանի թոռ Բարսեղ Բ. Անեցու ձեռնադրութիւնը (առաջին անգամ յիշուում է 1160ին) ո՞վ է Անիի եպիսկոպոս եղել⁵: Սակայն այս

2. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1869, էջ 184:

3. ՅՈՎԱԷՓԵՍՆ Գ., Յիշատակարամբ ձեռագրաց, հտ. Ա., Անթիլիաս, 1951, էջ 420: Նոյն դէպքի մասին պատմում է նաեւ Ուռհայեցին՝ «Տէր Գրիգորիս գնացեալ ի մայրաքաղաքի Հայոց... անդ ձեռնադրեաց եպիսկոպոս գրարսեղմ՝ գեներոզիմ իւր», իսկ քիչ անց Բարսեղին կոչում է «արքեպիսկոպոս Շիրակայ» (ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, աշխարհաբար թարգմ. Հ. Բարթիկեանի, Երեւան, 1991, էջ 226, 236): Աշխարհաբար թարգմանութեան մէջ նշուած է՝ «ձեռնադրեց իր քեռորդի Բարսեղիմ» (էջ 227), պէտք է լինի՝ «Քր քրոջ որդի Բարսեղիմ»:

4. Բարսեղ Ա. Անեցու մասին համագամամօրէն տե՛ս «Էջմիածին», 1993. թիւ Ա-Բ-Գ:

5. Անիի Տիզրան Հոնեցի կառուցած Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու հիւսիսային պատի

չըջանում Հայոց եկեղեցում Անիի աթոռին կարեւորագոյն տեղ էր յատկացւում: Հայր Ալիշանը գրելով Անիի թագաւորութեան եւ կաթողիկոսական Աթոռի անկման մասին, այնուհետեւ աւելացնում է. «... ցվերջ ժԲ. դարու՝ Անի Հայոց մայրաքաղաք կը համարէր եւ բնակավայր կաթողիկոսաց, որք եւ յոյս ունէին վերադառնալ հոն, որոյ եւ եպիսկոպոսն իբրեւ իրենց աթոռակալ էր, սկսեալ Մեծի Վկայասէրէն դրուած Բարսեղէ եւ հարիւր տարի ետեւ ալ Հռոմկլայի ժողովոյն մէջ (1177) յետ երկուց կաթողիկոսացն՝ Հայոց եւ Աղուանից՝ ամէնուն նախաթոռ բազմեցաւ Անոյ արքեպիսկոպոսն Բարսեղ»⁶: Այս վերջինիս օրօք Անիի եպիսկոպոսութիւնը գլխաւորում էր հիւսիսային Հայաստանի հոգեւորականութեան, յատկապէս Հռոմկլայի Աթոռի հետ եղած յարաբերութիւններում: Ինչպէս Օրմանեանն է գրում. «Անւոյ արքեպիսկոպոսները լիազօր իշխանութեամբ գլխաւորութիւնը կը պահէին բոլոր Հայաստանի մէջ եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ կոչմամբ եւ միայն մեծագոյն իրողութեանց մէջ յարաբերութիւն ունէին Հռոմկլայի աթոռին հետ»⁷: Երկարակեաց Բարսեղ Բ.

քարերից մէկի վրայ պահպանուել է հետեւեալ արձանագրութիւն. «Տէր ներսէս անպատին իպիսկոպոս ՈՅ (1156) թուիմ» (Դիւան հայ վիմագրութեան, պր. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 64): Քանի որ եկեղեցին կառուցուել է 1215ին, պէտք է ենթադրել, որ արձանագրութեան քարը պատկանել է աւելի վաղ ստեղծուած կառոյցի (հնարաւոր է, Ս. Աստուածածին մատուռին, որի տեղում իր եկեղեցին կառուցել է Հոննիցը, համաձայն շինարարական արձանագրութեան): Ներսէսն, ինչպէս տեսնում ենք, կոչուում է, «անպատի եպիսկոպոս»: Որ Անիի կամ նրա մերձակայքի վանքերից մէկը անպատ է կոչուել, երեւում է ժԳ. դարի սկզբներին քաղաքի Բխիսեց վանքում գրուած մի ձեռագրի յիշատակարանից, ուր յիշուում է «զմիակեցն զմիմոն, որ բնակէր յանպատի...» (ժԳ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների, կազմեց՝ Ա. Մաթեւոսեան), Երեւան, 1984, էջ 73): Հնարաւոր է, որ այդ նոյն անպատի առաջնորդն էր Ներսէսը, սակայն, որոշ տարակուսանք է առաջացնում նրա ունեցած բաւական բարձր՝ եպիսկոպոսական կոչումը: Արդեօք մինեւ յիշեալ անպատ տեղափոխուելը Ներսէսն Անիի եպիսկոպոսը չի՞ եղել: Ցաօք լրացուցիչ փաստերի բացակայութիւնը թոյլ չի՞ տալիս այս հարցում որոշակի բան ասել: Ստոյգ է միայն, որ Անիի եպիսկոպոս Բարսեղ Բ.ը առաջին անգամ յիշուում է 1160ին, իսկ Ներսէսը եպիսկոպոս էր 1156ին եւ այդ ժամանակ տնօրինում էր միայն իր անպատը:

- 6. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 125:
- 7. ՕՐՄԱՆՆԵԱՆ Մ., Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 1525: Ըստ Հայր Չամչեանի, Հայր Ալիշանի եւ Օրմանեանի, 1114ին Կարմիր Վանքի եկեղեցական ժողովի ժամանակ ընդունուած մի յատուկ որոշման համաձայն՝ Հայոց կաթողիկոսների ձեռնադրութիւնը պէտք է օրինական համարուեր Հայաստանի չորս գլխաւոր եպիսկոպոսական աթոռների (Հաղբատ, Բջնի, Ճաթեւ, Արտազ) համաձայնութեան դէպքում, որոնցից մէկը, Օրմանեանի կարծիքով, սկզբնապէս Անիի եպիսկոպոսութիւնն էր, եւ որի այդ իրաւունքը յետագայում փոխանցուել է Բջնիին (Ազգապատում, էջ 1354): Սակայն Լ. Նաչիկեան ելնելով չորս աթոռների թուում 1247ին հիմնուած Արտազի աթոռի գոյութեան փաստը, մերժում է այս ենթադրութիւնը, յիշեալ կանոնական որոշումը վերադրելով 1293ի ժողովին: (ԽԱԶԻԿԵԱՆ Լ., Արտազի հայկական իշխանութիւնը եւ Մործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», թիւ 11, 1973, էջ 136): Այդ շրջանում արդէն Անիի Աթոռը նախկին դերը չունէր: Սակայն, անկախ չորս

Անեցու գործունեությունների մանրամասնորեն անդրադարձել ենք ա՛յլ տեղում («Էջմիածին», 1993, Ա-Բ-Գ), այստեղ միայն նշենք, որ Հայաստանի եկեղեցիների եւ Հոռոմկլայի միջեւ ծագած հակասությունների արդիւնքում նա 1195ին Անիում կաթողիկոս է օծւում, սակայն նրա մահից յետոյ (վերջին անգամ յիշւում է 1199ին) քաղաքում նոր կաթողիկոս չի՛ ձեռնադրւում, այլ միայն եպիսկոպոս՝ նոյն Ապիրատեան տնից:

1187ին Հոռոմոսում գրուած մի ձեռագրի յիշատակարանից երեւում է, որ Բարսեղը նախապէս հոգացել էր իր եղբայր Ապիրատի որդու՝ Սարգսի, որպէս իր յաջորդի նախապատրաստման մասին: Յովհաննէս գրիչը յիշատակարանում նշում է. «... գծագրեցի զսա...ի տիեզերահռչակ ուխտիս՝ Հոռոմոսի կոչեցեալ վանք...ի հայրապետութեան մեծարգոյ եւ հռչակաւոր առնն Աստուծոյ տեառն Բարսղի եւ եղբարորդույ նորա աստուածարեալ մանկագոյն քահանայի Սարգսի, զորս պահեսցէ Տէր Աստուած ամենազաւր Աջովն իւրով, հանդերձ եղբարբք եւ ազգաւ...»⁸: Եւ իրօք, Բարսեղից յետոյ Անիի եպիսկոպոս է յիշւում Ապիրատի որդի Սարգիսը:

Բարսեղ Ա. Անեցու՝ 1072 թուականից մինչեւ Սարգսի աթոռակալութիւնը (վերջին անգամ յիշւում է 1220ին) Անիի Աթոռը զբոսնուել է Պահլավունիների հետ խնամիացած Ապիրատեան զօրեղ տոհմի ներկայացուցիչների ձեռքին (Բարսեղ Ա. Անեցու հայրը՝ Վասակը, մեծ իշխան Ապիրատի որդին էր, իսկ մայրը՝ Գրիգոր Մագիստրոսի դուստրը):

Սարգսի ժամանակ Անին անցել էր Զաքարեանների տիրապետութեան տակ: 1208ին, Զաքարէ ամիրսպասալարը Լոռիում գումարում է եկեղեցական ժողով Հայոց եւ Վրաց եկեղեցիների ծիսական որոշ հարցերի համապատասխանեցման նպատակով, նախապէս խնդիրը համաձայնեցնելով Հոռոմկլայի Յովհաննէս Զ. Սսեցի կաթողիկոսի եւ Կիլիկիայի Լեւոն Բ. Թաղաւորի հետ: Ժողովի բարձրաստիճան մասնակիցների թւում էր Անիի եպիսկոպոսը՝ «Սարգիս՝ աթոռակալ Անուոյ»⁹:

Զաքարէն Յովհաննէս Սսեցու ուղարկած վրանում պատարագ է մատուցել տալիս (այն պէտք է իր հետ ունենար ռազմական երթերի ժամանակ, որպէսզի կարողանար մարտից առաջ պատարագ մատուցել տալ, ինչպէս այդ անում էին վրացիները), որից ներկայ աւանդապահ Հոգեւորականութեան մի մասը ղժգոհ է մնում ու լքում ժողովը:

Իրաւասու աթոռների վերաբերեալ որոշման գոյութիւնից, ԺԲ. դարում Անիի եպիսկոպոսական աթոռն առաջնակարգ դեր էր կատարում, որի բազմակի ապացոյցները կարելի է տեսնել Բարսեղ Բ. Անեցու գործունեութեան ծանօթանալիս:

8. Ե-ԺԲ դարերի հայերէմ ձեռագրերի յիշատակարաններ (աշխատասիրութեամբ Ա. Մաթեւոսեանի), Երևան, 1988, էջ 251:

9. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 172:

Ամիրսպասալարը ստիպուած է լինում նոյն տարուան վերջերին հրա-
ւիրել մի նոր ժողով, այս անգամ Անիում: Ներկաների թւում էին
Դուհնի ու Բջնիի Վրթանէս եպիսկոպոսը, Կարսի Յովհաննէս եպիս-
կոպոսը, վանահայրեր, վարդապետներ ու քահանաներ Հաղբատի,
Սանահինի, Կեչառիսի, Թեղենեաց, Հաւուց Թառի, Սեւանի եւ ա՛յլ
վանքերից, բնականաբար՝ նաեւ Անիից ու նրա մերձակայքից¹⁰: Սա-
կայն, ժողովը կանոնաւոր ընթացք չի՛ ունենում, քանի որ նախ ճըզ-
ճըզում է Ջաքարէի խոստովանահայր՝ Մխիթար Գօշի ուշանալու (նա
Ջաքարէի յամառ պահանջից յետոյ է միայն Անի ճանապարհւում եւ
քաղաք հասնում 1209ի սկզբին՝ Աստուածայայտութեան տօնի նախ-
օրէին), ապա ժողովականների անմիաբանութեան պատճառով: Ջա-
քարէն Մխիթար Գօշի գալուց յետոյ յայտարարում է, թէ ժողովի
կարծիքն իր համար այլեւս նշանակութիւն չունի, իսկ նրբանկատ
վարդապետը ստիպուած է լինում մի կողմից ամիրսպասալարին մեղ-
մել, միւս կողմից՝ իր հոգեւոր եղբայրներին յորդորել, որ խնդիրը
չսրեն: Ի վերջոյ ժողովն աւարտում է առանց վերջնական համաձայ-
նութեան կայացման. Ջաքարէն վարում է իր ուզածի պէս, որոշ
ծիսական նորամուծութիւններ կիրառելով, իսկ Հայոց եկեղեցիները
պահպանում են հնաւանդ ծէսը («Ջաքարիայ զժամանակս կենաց իւրոց
... նոյնպէս վարեցաւ, որպէս կամէր, բայց եկեղեցիքն ամենայն՝
առաջին պաշտամամբ վարեցան»)¹¹: Անիի եպիսկոպոսի ունեցած
դիրքորոշման մասին ո՛րեւէ բան յայտնի չէ, բայց նա եւս պէտք է
ընդհանուր տրամադրութեան կրողը լինէր:

Սարգիսը յիշուում է Անիի մերձակայ Բազնայրի վանքի երեք՝
1209, 1210, 1211 թուականներում նուիրատուական արձանագրու-
թիւններում: Դրանցից երկրորդը, որ պատկանում է Օշականի Պար-
սիմոյ անունով ուխտիւն, սկսւում է հետեւեալ կերպով. «ՌԾԹ (1210)
ի յամս աստուածարեալ եւ մեծարգոյ տեսուն Սարգսի վերադիտողի
մայրաբաղաբիւն Անոյ եւ ի պետական իշխանութեան շահնշահ Զա-
բարիայի...»¹²: Միւս երկու արձանագրութիւններում նշուում է նաեւ

10. Նոյն տեղում, էջ 171-172, 174:

11. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 177-178, տե՛ս նաեւ ՎԱՐԴԱՆ ԲԱՐՁՐԱԲԵՐԴԵՑԻ,
Պատմութիւն տիեզերակամ, Մոսկուա, 1861, էջ 183: Ստեփանոս Օրբելեան Գրիգոր
Անավարզեցի կաթողիկոսին յրձ թղթում թուարկելով Հայոց եկեղեցական ժողով-
ները եւ առանձնապէս ընդգծելով դրանց հակաքղեկեղեցական կէտերը, Անիի ժո-
ղովի կապակցութեամբ գրում է. «...չարաչար նզովիւք բարձին եւ հեռացուցին
զամենայն համախոհսն Վրաց եւ Հոռոմոց»։ «ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԱԲԵԼԵԱՆ, Պատմու-
թիւն մահաճգիւն Սիսակամ, Թիֆլիս, 1910, էջ 455): Սակայն, դա միայն պէտք է
ընդունել որպէս ժողովականների ընդհանուր տրամադրութեան արձագանք,
քանի որ հայ-վրացական զինակցութեան այդ շրջանում պաշտօնական հակաքղեկ-
եղեցական որոշումներն ու առաւել եւս հայածանքները, անհաւանական են:

12. ՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՅՐՆ., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներիկ, Ս.
Ղազար, 1864, էջ 180:

Սարգսի հօր անունը՝ «ի յամս աստուածապատիւ տեառն Սարգսի, որդոյ Ապիրատին...»¹³:

Սարգիս եպիսկոպոսի անուան վերջին անգամ հանդիպում ենք Անիում, եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու 1220 թ. կանոնագիր արձանագրութեան մէջ, ուր նա թողնում է քաղաքում երէցկնոջ մահուան ժամանակ Աթոռին տրուող մեծ ու փոքր «մուտքը»՝ հարկը: Արձանագրութիւնը մասնաւորապէս տեղեկացնում է, «ի թուիս ՈԿԹ (1220) շնորհիւն Աստուծոյ ես տէր Սարգիս, որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անուոյ եւ կամակցութեամբ ամիրիս Երկաթայ, յաղագս բարեպաշտ եւ աստուածասէր պարոնաց մերոյ աթաբակ Իւանէի եւ ամիրպասալար Շահնշահ Սարգիս եւ Աւագի երկարակենդանութեան եւ յիշատակի մեծ սպարապետին Հայոց Ջաքարէի ազատեցաք զամենայն քաղաքիս քահանայիցս զիրիցակնոջ մուտք՝ զմահու եւ զկենաց եւ զմատղաց, զփարթամաց եւ զաղքատաց, զեկաց եւ զբնակաց, թէ լաւ եւ թէ վաթար իրիցակին վախճանի ոչ մեծ մուտք եւ ոչ փոքր ի յԱթոս չտայ, այլ ազատ են մինչեւ ի գալուստ Բանին Աստուծոյ. եւ զայս եւս հաստատեցաք, որ չունի հրաման ի Բանէ Աստուծոյ եպիսկոպոս, որ այժմ, եւ կամ զկնի մեր, յօգնութիւն յուզէ յիրիցանոյս, մինչեւ զայն փողն կամաւ կամ անկամայ. եւ քահանայ, որ պատառիչ լինի ուխտիս եւ օգնութիւն տայ, ի կարգէն լուծեալ լիցի...»¹⁴:

Արձանագրութիւնը ուշադրաւ է մի քանի առումով. նախ տեղեկացնում է Անիում երէցկնոջ մահուան ժամանակ Աթոռի օգտին գանձուող իւրօրինակ հարկի մասին, որ հաւանաբար տրուում էր նուիրատուութեան ձեւով («կամաւ կամ անկամայ»): Արձանագրութիւնը կարեւոր աշխարհ է պարունակում այդ ժամանակաշրջանի քաղաքի բազմանդամ քահանայական դասի մասին, որն արդէն պայմանականօրէն բաժանուում էր եկուորների ու բնիկների («զեկաց եւ զբնակաց». այդ մասին վկայութիւններ կան նաեւ յետագայի արձանագրութիւններում), ինչպէս նաեւ ունեւորների ու չունեւորների մասին, («զփարթամաց եւ զաղքատաց»):

Հետաքրքիր է, որ հարկ թողնելը նուիրուել է Ջաքարէ ամիրսպասալարի յիշատակին: Այս արձանագրութեան մէջ առաջին անգամ յիշուում է Անիի ամիրա Երկաթը, որի որդի Բարսեղը յետագայում քաղաքի եպիսկոպոս դարձաւ:

Սակայն, առաջին հայեացքից տարակուսանք է յարուցում սոյն արձանագրութեան 1220 թուականը, քանի որ այդ թուականից առաջ ու յետոյ քաղաքի ու մերձակայ վանքերի արձանագրութիւններում,

13. Նոյն տեղում, էջ 179, 181:

14. Դիւան հայ վիմագրութեան, էջ 17:

որպէս Անիի ու Շիրակի արքեպիսկոպոս է յիշուում Աբուղամբի որդի Գրիգորը (յետագայում կոչուել է նաեւ Գրիգոր Մագիստրոս): Նա ներկայացնում էր Պահլաւունեաց տան մի ճիւղը, որ ծագում էր իշխանաց իշխան Վահրամից (1045ին նահատակուած նշանաւոր Վահրամ սպարապետից), որդին էր Աբուղամբ Մագիստրոսի¹⁵ եւ ունէր մէկ աշխարհական եղբայր Ղարիբ (Խարիբ) անունով:

Գրիգորն առաջին անգամ յիշուում է Անիի մերձակայ Արջոյ Առիճ վանքում 1213ին, երբ Հոռոմեանց Կոստանդի որդի Յովհաննէս քահանան՝ միաբանելով այդ վանքին նուիրատուութիւն է կատարում «ի Սուրբ Աստուածածինս, ի ձեռն տէր Գրիգորի, որդոյ Ապուղամբի»¹⁶: Հաւանաբար այդ ժամանակ նա Արջոյ Առիճի վանքի առաջնորդն էր:

15. Ակինեան այն ենթադրութիւնն է արել, թէ Աբուղամբ Մագիստրոսը որդին էր Բարսեղ Բ-ի եղբայր՝ Ապիրատի, թէեւ Ապիրատի (Գրիգոր-Ապիրատ) մասին խօսելիս նշում է, որ «իր զաւակներէն կը յիշուի միայն Սարգիս քահանայ», հմտ. ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 395): Վերջինս, ինչպէս տեսանք, Զաքարէի ժամանակ Անիի եպիսկոպոսն էր՝ «Սարգիս որդի Ապիրատի», բայց Ակինեան այս մասին չի՛ յայտնում: Իսկ քիչ յետոյ անդրադառնալով Անիի Պահլաւունիների վերջին շառաւիղներին եւ տեղեկացնելով, որ Աբուղամբ Մագիստրոսն ու իր որդիները Մարմաշէնի արձանագրութեան մէջ իրենց կոչում են Վահրամ իշխանաց իշխանի թոռներ, այնուամենայնիւ Աբուղամբին համարում է Ապիրատի որդին, գրելով՝ «ժամանակը կը պահանջէ, որ իր որդին եղած ըլլայ Աբուղամբ» (էջ 398): Սակայն, այս դէպքում Անիի եպիսկոպոս Սարգիս Ա.ը եւ Աբուղամբ Մագիստրոսը պէտք է հարազատ եղբայրներ լինէին, մի բան, որ ոչ մի սկզբնաղբերով չի՛ հաստատուում: Միւս կողմից, Աբուղամբը եւ նրա որդիները Ապիրատեան տան ժառանգները լինելու դէպքում՝ իրենց Վահրամ իշխանաց իշխանի սերունդ չէին կարող համարուի, ինչպէս որ այդ չի՛ արել նրանցից առաջ եղած Ապիրատեաններից ո՛նեւ մէկը: Ն. Ակինեան ելնում է միայն ժամանակի համապատասխանութիւնից, որ տուեալ դէպքում որոշիչ չի՛ կարող լինել:

ԺԱ. դարում ա՛յնքան մեծ հռչակ ու ճիւղաւորում ստացած Պահլաւունեաց տունը, թէեւ Շեղագեանների տիրապետութեան շրջանում՝ Անիում մեծ դեր խաղում (այդպիսի դեր ունէին Ապիրատեանները), բայց ոչ բնաջնջուել էր, ոչ էլ հիմնովին տեղահանուել: Ինչպէս երեւում է, նրանք կրկին զօրացել են Զաքարեանների օրօք եւ մասամբ վերականգնել իրենց ժառանգական իրաւունքները: Այդ անելու համար, նրանք առաջին հերթին պէտք է յիշէին իրենց համբաւաւոր նախնիներին. պատահական չէ, որ Մարմաշէնի արձանագրութեան սկզբում գրում են. «...նորոգումն եղի... ի ձեռն որդւոց Ապուղամբի Մագիստրոսի տէր Գրիգորոյ արհիեպիսկոպոսի եւ հարազատի իմոյ Խարսիմ, թոռանց Վահրամայ իշխամաց իշխանի եւ գարմից եւ շառաւեղի սրբոյն Գրիգորի...», իսկ վերջում, Ղարիբի մահուան մասին ծանուցելոց յետոյ տեղեկացնում, թէ նա թաղուել է «առ դրամ սրբոյ կաթողիկէիս մերձ առ մշխարս հաւում մերոյ Վահրամայ իշխամի»՝ ԱԼԻՍԱՆ Լ. Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 150-151: Տեղին է յիշել, որ Վահրամ Պահլաւունի (նրա պապի անունը Աբուղամբ էր) ունէր երկու որդի՝ Աբուղամբ եւ Գրիգոր: Հնարաւոր է, որ սրանցից մէկը, թերեւս Աբուղամբի սերնդից էր Աբուղամբ Մագիստրոսը (նկատենք, որ Ապիրատեանների տոհմաբանութեան մէջ Աբուղամբ անուն ընդհանրապէս չկայ):

16. ՍԱՐԳԻՍԵԱՆ Ն., նշ. աշխ., էջ 190:

Երկրորդ անգամ Գրիգոր յիշուում է Անիի մերձակայ մէկ ա՛յլ նշանաւոր վանքում՝ Բազնայրում (որ կոչուում է «մեր սեփական ուխտա»), ուր 1215ին մի կանոնադիր-արձանագրութիւն է թողել, սահմանելով մահացած հոգեւորականների համար մատուցող պատարագների քանակը¹⁷: Նոյնիմաստ արձանագրութիւն գրուել է նաեւ Արջոյ Առիճում «հրամանաւ Գրիգոր լրոյ եպիսկոպոսի, որ էր ժառանգորդ Սուրբ Ուխտիս...»¹⁸: Ինչպէս երեւում է յաջորդ՝ 1216ի արձանագրութիւնից, այդ ժամանակ Գրիգորն արդէն Անիի ու Շիրակի արքեպիսկոպոսն էր: Անիի եպիսկոպոսանիւտ Ս. Առաքելոցի պատին գրուած այդ արձանագրութեամբ նա վերացնում է մահացածների համար զանձուող, «հոգու հարկը», որ 11 դրամ էր կազմում:

«Թուակաւմին ՈԿԵ (1216) շնորհիւն Աստուծոյ Եւ տէր Գրիգոր որդի Ապուղամրի ժառանգորդ սեփական հայրեմի Աթոռոյ մայրաքաղաքիս Անիոյ, արհիեպիսկոպոս այսմ նահանգի, թող ի գհարկն հոգոյս, գոր ի սկզբանէ սահման էր յամենայն մեռելի ժԱ. (11) դրամ տալ ի փարթամաց Եւ աղքատաց առհասարակ միապէս արնլով մինչեւ ի գալն Գրիստոսի: Արդ, Եւ յաղագս Աստուծոյ ընտրեալ պարոմին մերոյ տեառն քաղաքիս ամիրսպասալար շահնշահ Զաւարիայի փոխեցելոյն առ Գրիստոս Եւ վասն յերկարկեմնաւութեան հարազատի իւրոյ, Իւանէի, Եւ որդոյ նորա Շահնշահ Սարգսիմ, աստուածատէր իշխանացս Հայոց ազգատոհմիս Եւ վասն հոգոց ննջեցելոց մերոց, բարձի գայս հարկս յամենուստ մինչեւ ի կատարած յաւիտեմիս...»¹⁹:

Այս արձանագրութեան մէջ Գրիգորը պարզորոշ ընդգծում է, որ հանդիսանում է Անիի Աթոռի «ժառանգորդը», որ կոչուում է «սեփական» եւ «հայրենի»: Նա մի շարք ա՛յլ արձանագրութիւններում եւս նման ձեւակերպում է օգտագործում: Լմբատավանքի մի անթուական արձանագրութեան մէջ գրում է. «այս մեր արձան անջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր տեառն Գրիգորոյ արհիեպիսկոպոսի մայրաքաղաքին Անուոյ եւ նահանգին Շիրակայ, ժառանգորդ եւ սեփական մերոյ Աթոռոյս...»²⁰, իսկ 1227ին՝ Անիում գրում է. «Եւ տէր Գրիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքիս Անոյ Եւ ժառանգորդ սեփական հայրեմի Աթոռոյս մերոյ...»²¹: Ո՛չ Բարսեղ Ա. ը կամ Բարսեղ Բ. ը, ո՛չ էլ

17. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Ն., նշ. աշխ., էջ 183: Բազնայրի 1215ին մէկ ա՛յլ արձանագրութիւն վկայում է, որ Գրիգորն ինչ որ բան է վաճառել հոռոմանց Կոստանդի որդի Յովհաննէսին, որն իր հերթին՝ այն նուիրել է վանքին. «ՈԿԴ (1215) ի յամս աստուածապատիւ հոգեւոր տեառն Գրիգորոյ, որդոյ Ապուղամրին, Եւ Յովհաննէս քահանայ... գնեցի... ի կէսն ի տէր Գրիգորոյ, որդոյ Ապուղամրին եւ ետու ի Սուրբ Աստուածածնիս...», նոյն տեղում:

18. Նոյն տեղում, էջ 191:

19. Դիւան..., էջ 14:

20. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., նշ. աշխ., էջ 165:

21. Դիւան..., էջ 1823

Ապիրատի որդի Սարգիսը այդպէս հանգամանօրէն չեն շեշտում իրենց «ժառանգական իրաւունքը»:

1217ին Գրիգոր թողնում է Ջատկի տօնին աթոռին տրուող եւս երկու հարկ. մէկը իւրաքանչիւր գիւղից վերցուող երկու գրիւ (17, 28 կգ.) հացն էր, միւսը՝ քաղաքի իւրաքանչիւր եկեղեցուց (մատաղից) տրուող մէկական մորթին: «Ես տէր Գրիգոր, որդի Ապուղամրի, արհիեպիսկոպոս, կամեցաք առնուլ գեղեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակայ եւ ի քաղաքիս եկեղեցեացս ի յԱնոյ, զի սահման էր ի սկզբանէ յամեմայն գեղէ երկու գրիւ հաց յԱթոռս տալ, եւ ի քաղաքիս ամեմայն եկեղեցիս մորթի մին՝ Ջատկին տային: Արդ ես... թողի զայս հացս ամեմայն գեղի մեծի եւ փոքու եւ Ջատկի մորթին ամեմայն եկեղեցոյ...»²²:

1218ին, Անիի «Վրացական» եկեղեցու պատին մի ընդարձակ վրացերէն արձանագրութիւն է թողել Վրաց Եպիսկոպոսը, որոշ հարկեր կարգաւորելով քաղաքի քաղկեդոնական համայնքի համար: Արձանագրութեան վերջում հայերէն կարճ մակագրութեամբ այն հաստատել են Անիի Վահրամ ամիրան եւ Գրիգոր եպիսկոպոսը՝ «Ես տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս, ես՝ Վահրամ ամիրայ քաղաքիս, վկայեմ, որ կաթողիկոսին հրամանք է զայս»²³: Այստեղ հետաքրքիր է, որ Գրիգորը կոչուում է «երիցապետ եպիսկոպոս»:

Մինչեւ 1220 թուականը պէտք է գրուած համարել նաեւ Գրիգորի Լմբատավանքում եւ Հոռոմոսում թողած արձանագրութիւնները²⁴:

Այժմ վերադառնանք Սարգիս Ա.ի արձանագրութեան, որի գրութեան 1220 թուականը, ինչպէս տեսնում ենք, համընկնում է Գրիգորի եպիսկոպոսութեան շրջանին: Այստեղ հնարաւոր է երկու ենթադրութիւն. կա՛մ արձանագրութեան ՈԿԹ թուականի միաւոր սխալ է, եւ այն աւելի վաղ է գրուել, կա՛մ էլ, եթէ թուականը ճիշտ է, Անիում միաժամանակ գոյութիւն է ունեցել հոգեւոր իշխանութեան երկու բարձրագոյն պաշտօն՝ առաջնորդ եւ երիցապետ եպիսկոպոս: Երկրորդ ենթադրութեան օգտին եղած փաստարկներն աւելի համոզիչ են թւում, ուստի փորձենք պարզաբանել այս հարցը: Սակայն մինչեւ Սարգիս եւ Գրիգորի խնդրին անդրադառնալը՝ ծանօթանանք Անիի մէկ ա՛յլ արձանագրութեան, որ գտնուում է նոյն Ս. Առաքելոցի պատին եւ վերաբերում է 1270ական թուականներին (քաղաքի մելիքն էր Փախրազինը, որ յիշուում է նաեւ 1277ին):

22. Նոյն տեղում, էջ 16:

23. Անիի վիմագրերի ժողովածուում արձանագրութեան թուականը նշուած է՝ ՈԿԹ (1218): Տե՛ս ՄՈՒՐԱԴԵԱՆ Պ., Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, Երևան, 1977, էջ 43:

24. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., նշ. աշխ., էջ 165, ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Ն., նշ. աշխ., էջ 151:

«Նվղամին (sic): Շնորհիւն Աստուծոյ ի տիրութեան քաղաքիս եւ յառաջնորդութեան տէր Սարգսի եւ ի մելիքութեան Փախրադինին եւ Մխիթար Եպիսկոպոս Տեղերեցի ի ցասմանէ շարժի աւուրքս, բարձաբ գկիրակէի վաճառն ի փոռոցէ. որ այս գրիս հակառակ կայ թէ մեծ թէ փոքր, քաղաքիս մեղացն տէր է»²⁵: *Ինչպէս տեսնում ենք երկրաշարժի հնարաւոր հետեւանքները կանխելու համար՝ Մխիթար Տեղերցի Եպիսկոպոսը, որ Անիի Եպիսկոպոսն էր, արգելել է փողոցի կիրակնօրեայ վաճառահանութիւնը, բայց նոյն արձանագրութեան սկզբում յիշուում է նաեւ Սարգիս Բ. Եպիսկոպոսը, որպէս առաջնորդ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Սարգիսը քաղաքի հոգեւոր առաջնորդն էր, իսկ Մխիթարը՝ երիցապետ Եպիսկոպոսը:*

Այժմ վերադառնանք Սարգիս Ա.ի 1220 թուի արձանագրութեան: Նրա սկզբում հեղինակը յայտնում է. «Եւ տէր Սարգիս, որդի Ապիրատի առաջնորդ մայրաքաղաքիս Անույ», *այսպէս հարկը թողնելու մասին նշելուց յետոյ գրում՝ «գայս եւս հաստատեցաք, որ չունի հրաման ի Բանէ Աստուծոյ Եպիսկոպոս որ այժմ, եւ կամ զվնի մեր, յաւգնութիւն յուզէ...»*²⁶: *Սարգիսը, որպէս առաջնորդ, խօսում է մէկ ուրիշի՝ իր ժամանակի Եպիսկոպոսի մասին, շեշտելով, որ նա իրաւունք չունի հարկը ուզել: Այդ Եպիսկոպոսը հենց երիցապետ Եպիսկոպոսն է՝ Աբուղամրի որդի՝ Գրիգորը:*

Յատկանշական է նաեւ, որ չնայած իր գրած արձանագրութիւններում՝ Գրիգորը, որպէս կանոն խօսում է վերամբարձ ռոնով («Եւ տէր Գրիգոր, որդի Ապուղամրի, ժառանգորդ սեփական հայրեմի Աթոռոյս մայրաքաղաքիս Անույ, արհիԵպիսկոպոս այսմ նահանգի...»), բայց Վրաց Եպիսկոպոսի կաթողիկոսի արձանագրութեան տակ (1218ին), որ ոչ թէ Անիի Աթոռի ներքին գործերին վերաբերող, այլ պաշտօնական, եթէ կարելի է ասել՝ միջեկեղեցական բնոյթի գրութիւն է, գրում. «Եւ տէր Գրիգոր իրիցապետ Եպիսկոպոս...»²⁷: *Մեր կարծիքով հենց սա է Գրիգորի գրած պաշտօնի իրական անուանումը՝ «երիցապետ Եպիսկոպոս»: Իսկ Սարգիս Ա.ն նոյն շրջանում հանդիսանում էր քաղաքի հոգեւոր առաջնորդը: Միակ մութ կէտն այստեղ այն է, որ Գրիգորն իր արձանագրութիւններում երբեք չի՝ յիշում Սարգսին, իսկ վերջինս 1220ին, արձանագրութեան մէջ թէեւ ակնարկում, բայց անուանապէս չի՝ նշում Գրիգորին: Բայց այդ կարող է բացատրուել երկու հոգեւոր պետերի անձնական յարաբերութիւններով: Սարգիսը, որպէս Ապիրատեան տան շառաւիղ, որ սկսած 1072 թուականից վարում էր Անիի հոգեւոր իշխանութիւնը, թուում է այնքան էլ բարեացակամօրէն*

25. Դիւան..., էջ 24:

26. Նոյն տեղում, էջ 17:

27. Դիւան..., էջ 61:

չի ընդունել Պահլաունեաց տոհմաճիւղից սերող Գրիգորի առաջխաղացումը, մանաւանդ, որ վերջինս էլ ամէն առիթով շարունակ նշում է, թէ Հանդիսանում է Անիի Աթոռի ժառանգորդը, ասես իր գրաւած դիրքի օրինականութիւնը եւ տոհմական իրաւունքը ցոյց տալու համար: Անիի մերձակայ Բազնայրի ու Արջոյ Առիճի վանքերը, Շիրակի նշանաւոր Մարմաշէնն ու Լմբատավանքը Գրիգորը համարում է «սեփական», «հայրենի», այսինքն արդէն իսկ բաւական ընդարձակ իշխանութիւն ունէր Անիի շրջակայքում: Իսկ Սարգսի երբեմնի զօրեղ տոհմն արդէն թուլացել էր, պատահական չէ, որ ԺԳ. դարում Ապիրատեան պայազատներ ընդհանրապէս չեն յիշատակւում: Հնարաւոր է, որ Սարգսի մահից յետոյ Գրիգորը վերջապէս ամբողջովին «ժառանգել» է Անիի Աթոռը համատեղելով առաջնորդութիւնն ու երիցապետութիւնը:

Այսպէս, վերը նշուած փաստարկները մեզ բերում են այն եզրակացութեան, որ ԺԳ. դարում Անիի բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնը եղել է երկաստիճան (կարելի է նաեւ ասել երկիշխան), ունենալով հոգեւոր առաջնորդ եւ երիցապետ եպիսկոպոս:²⁸ Այն չի հակասում եկեղեցական կանոններին, եթէ նկատի ունենանք քրեւպիսկոպոսութեան աստիճանի գոյութիւնը, որ յայտնի է դեռ վաղ միջնադարից: Ուշագրաւ է, որ «երիցապետ» բառի դիմաց Հայկազեան Բառարանը տալիս է նաեւ «փոխանորդ եպիսկոպոսի» բացատրութիւնը:²⁹ Կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցին, Սսում գումարած ժողովի անդիւնքում կազմուած՝ 1245 թուի Հայաստանի եկեղեցիներ ու նաեւ Անի ուղարկուած շրջաբերականում խօսելով եպիսկոպոսների պարտականութիւնները մասին գրում է. «Եպիսկոպոսը տարեկան երկու անգամ պետք է շրջի իր թեմում, ժողով անի իր հօտին եւ սուրբ ու գիտուն քրեւպիսկոպոս պետք է նշանակի, որ եկեղեցու դատաստանն ըստ կանոնների անել կարողանայ, լինի երկիւղած, ոչ ագահ»³⁰: Այսինքն, եպիսկոպոսական փոխանորդի՝ քրեւպիսկոպոսի գոյութիւնը յիշեալ ժամանակաշրջանում միանգամայն բնական ու անգամ անհրաժեշտ էր: Անիում տեսնում ենք զրեթէ նման երեւոյթ, սակայն տեղական, քաղաքային իրականութիւնից բխող առանձնաշատկութիւններով³¹: Հետաքրքիր է, որ Կոստանդին Կաթողիկոսի

28. Այս խորքի վրայ նոր մեկնաբանութիւն կարող է ստանալ Ստեփանոս Օրբելեանի մօտ պահպանուած այն տեղեկութիւնը, ուր խօսւում է Իվանէ աթարեկի Դուինում գումարած «գատավարութեան» մասին եւ որի մասնակիցների թուում նշւում է, որ պատմիչը ոչ թէ փորձել է մեծարել Անիի եպիսկոպոսին, այլ ընդգծել է նրա պաշտօնը՝ «մեծ եպիսկոպոս»:

29. Նոր Բաղգիրք Հայկազան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 685:

30. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Հայոց Պատմութիւն, (աշխարհաբար թարգմ. Վ. Առաքելեան), Երեւան, 1982, էջ 219:

31. Կարելի է ենթադրել, որ երկու եպիսկոպոսների գոյութիւնն Անիում սկսուել է

յիշեալ չըջաբերականը Հայաստան բերած Վարդան Արեւելցուն ընդունած եպիսկոպոսների թուում յիշուում են նաեւ «եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանական եւ Գրիգոր»³², այսինքն, այս չըջանում Անիից անհամեմատ փոքր բնակավայր Բջնին ունէր երկու եպիսկոպոս :

Անիի հոգեւոր առաջնորդը եւ երիցապետ եպիսկոպոսը ունեցել են իրաւասութիւնների որոշակի բաժանում, սակայն առայժմ առկայ տուեալների միջոցով անհնար է դրանց անջրպետը յստակ որոշել³³ : Աւելին, որոշ հանգամանքներ խօսում են այն մասին, որ իրաւասութիւնների ընդարձակութեան առումով շատ բան կախուած է եղել այս կամ այն կոչումը կրող եպիսկոպոսի անձից, նրա տոհմական ծագումից ու հնարաւորութիւններից :

Այժմ վերադառնանք Աբուղամբի որդի՝ Գրիգորի գործունէութեան վերջին շրջանին : Նրա անուամբ յայտնի թուակիր յաջորդ արձանագրութիւնները վերաբերում են 1225, 1226, 1227 թուականներին եւ այս կամ այն կերպ կապուած են նրա եղբոր՝ իշխան Ղարիբի նահատակութեան փաստի հետ : Առաջինը Մարմաչէնի ընդարձակ արձանագրութիւնն է, որ տեղեկացնում է եկեղեցու հիմնաւոր նորոգման,

Բարսեղ Բ. Անեցու ժամանակ, այն բանից յետոյ, երբ նա 1195ին Անիում կաթողիկոս օծուեց : Նորընծայ հայրապետը գոնէ արտաքսապէս իրեն աւելի լայն իրաւունքներ պէտք է վերապահեր եւ քաղաքի «երիցապետութիւնը» թողներ ո՛րեւէ եպիսկոպոսի : Բարսեղի մահից յետոյ նրա եղբորորդի Սարգիսը այլեւս կաթողիկոս չձեռնադրուեց, այլ միայն՝ եպիսկոպոս, բայց պահպանելով աւագութեան նշանները (պատահական չէ, որ Գանձակեցին Լոռիի ժողովի մասնակիցների թուում միայն նրան է կոչում աթոռակալ՝ «Սարգիս աթոռակալ Անույ», իսկ Բագնայրի 1210ի արձանագրութեան մէջ նա անուանուում է «վերադիտող մարաբաղաքին Անոյ») : Ինչպէս երեւում է, այդ ժամանակ Անիում պահպանուեց նաեւ երիցապետ եպիսկոպոսի պաշտօնը, որն անցաւ վերազարթօնք ապրող Պահլաւունիներին :

Յիշեալ ժամանակաշրջանում Անիում իր եպիսկոպոսն ունէր նաեւ քաղաքի քաղկեղոնական համայնքը : Վերջինս մեծ հեղինակութիւն էր վայելում Վրաց արքունիքում կոչուելով «Մեծ Հայքի միտրոպոլիտ» : Անիի քաղկեղոնական եպիսկոպոսներից յատկան է յատկապէս 1223ի Վրաց արքունիքի կողմից, որպէս պատուիրակ Հոռոմ ուղարկուած Դաւիթը (ՄՈՒՐԱԴԵԱՆ Պ., Հայաստանի վրացերեւ արձանագրութիւնները, էջ 63-64) : Հ. Ղ. Ալիշանը նրա անունը մուծել է Անիի եպիսկոպոսների իր կազմած ցանկում, չմոռանալով սակայն, կից հարցական նշան դնել («Շիրակ», էջ 96) :

- 32. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, էջ 303 :
- 33. Ինչպէս երեւում է առաջնորդի կոչումն ու իրաւասութիւնների մի մասը (մասնաւորապէս դատական իրաւունքը) ԺՊ. դարում անցել է աշխարհականներին : Այսպէս, դարի 20-40ական թուականներին Անիում Գրիգոր Խուցեա անունով մէկը յիշուում է, որպէս «առաջնորդ եւ հիմն քաղաքին», իսկ որոշ ժամանակ անց նրա պաշտօնը ժառանգած որդին՝ Ասիլը կոչուում է «առաջնորդ եւ հիմն քաղաքիս Անոյ, իրաւարար եւ արգարդատ ամենայն քաղաքին» (ՅՈՎՍԵՓԵԱՆ Գ., Յիշատակարանք..., էջ 892) : Վերջինս 1357ին մի թանկագին Աւետարան նուիրելով Անիի Ս. Առաքելոցին յիշատակարանում այն կոչում է իրենց «սեփհական հայրենի եկեղեցին» (ՄԱԹԵՆՈՍԵԱՆ Կ., XIV դարի յիշատակարանները Աճիի եւ անեցիների մասին, «Պատմա-բանասիրական հանդէս», 1985, թիւ 3, էջ 113) :

նրան տրուած բազում նուիրատուութիւններէ մասին, որ կատարել են Գրիգորն ու Ղարիբը. «Ի ժամանակս... պարունաց մերոց քաքալ Իւանէի եւ մանտատրթուխուցես Շահնշահի, հրամանաւ սոցին վերստին նորագումն եղես հրաշափառ տամարի... կաթողիկէի Մարմաշինոյ ի ձեռն որդւոց Ապուղամբ Մագիստրոսի՝ տէր Գրիգորայ արհիէպիսկոպոսի եւ հարագատի իմոյ Խարփին՝ թոռանց Վահրամայ իշխանաց իշխանին...»³⁴: Այնուհետեւ թուարկուում են վանքին տրուած ընծաները՝ ոսկիէ ու արծաթէ սպասք, Հին եւ Նոր Կտակարաններ, Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով, ամբողջ գիւղեր, այգիներ եւ այլն³⁵: Արձանագրութեան երկրորդ մասում նշուում է Ղարիբի մահուան ու Մարմաշինում թաղուելու մասին. «... գեղեցկագեղ եղբայրն իմ Խարփի Մագիստրոսն... մարտիրոսացաւ ի պատերազմի անարիմաց... գմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ կաթողիկէիս մերձ առ նշխարս հաւուսն մերոյ Վահրամայ իշխանին»³⁶, իսկ վերջում Գրիգոր եպիսկոպոսը պարտաւորեցնում է Մարմաշինի սպասաւորներին այդուհետեւ տարուան բոլոր կիրակիներին Աւագ խորանում պատարագել եղբօր հոգու համար՝ «յանուն նահատակին Քրիստոսի՝ Խարփին... մինչ ի ծագումն Որդոյն Աստուծոյ...»³⁷: Յաջորդ երկու արձանագրութիւններն Անիից են եւ հիմնական բովանդակութեամբ գրեթէ կրկնում են միմեանց: Առաջինը՝ փորագրուած Սիթի Պահլաւունու եւ նրա ամուսին՝ Գրիգորի նորոգած Ս. Սարգսի եկեղեցու պագին, վկայում է, որ Գրիգոր եպիսկոպոսը թողել է Անիի քահանաների թաղման հարկը. «Ի ՈՂՅ (1226) ես տէր Գրիգորի թող ի գհարկ թաղման քահանայիցս Անոյ...»³⁸:

1227ի արձանագրութիւնն արդէն գրուած է եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի պատին եւ ունի լրացուցիչ մանրամասներ. «Ի ՈՂԶ (1227) կամումն Աստուծոյ ես տէր Գրիգոր արհիէպիսկոպոս մայրաքաղաքիս Անոյ եւ ժառանգորդ սեփական հայրեմի Աթոռոյս մերոյ, թողի գհարկ քահանայից քաղաքացեաց, գոր ի մահուան արմ տային եւ փոխարէն հատուցեմ մեզ գաւազ հինգշաբթին պատարագ յամենայն եկեղեցիս յանուն հարագատ եղբար իմո Ղարփին, կատարելոյ ի պատերազմի խորագնեցեաց ի ՈՂԴ (1225) թուականին. եւ չունի ոք իշխանութիւն յիրեցոյ հարկս առնել...»³⁹: Այսպիսով, Գրիգորը Անիի

34. И. ОРБЕЛИ, *Избранные труды*, Ереван, 1963, с. 443 *համտ.* ԱԼԻՇԱՆ՝ Հ. Ղ., Կիրակ, էջ 150-151:

35. Նոյն տեղում: Մինչ այդ Ս. Ստեփանոս եկեղեցին պատկանել է Անիի եպիսկոպոսական աթոռին, որին էլ վերադարձուել է 1288 թուին (Դիւան..., էջ 29):

36. Նոյն տեղում:

37. Նոյն տեղում:

38. Դիւան..., էջ 55:

39. Նոյն տեղում, էջ 18:

քահանաների մահուան ժամանակ զանձնող հարկը վերացրել է ի յիշատակ իր Ղարիբ եղբոր, որն ամենայն հաւանականութեամբ զոհուել էր 1225ի Օգոստոսին, Պորեզմի շահ Ջալալ ադ-Դինի զօրքերի դէմ տեղի ունեցած Գառնիի ճակատամարտում, ուր Իւան է Բաթրակի զլխաւորած հայ-վրացական զօրքը պարտութիւն կրեց: Ինչպէս երեւում է, հարկը թողնելու մասին որոշումը կայացուել է նոյն 1225ին, այդ պատճառով էլ մինչեւ Ս. Առաքելոցի պատին արձանագրուելը տեղ է գտել նաեւ Սիթի իշխանուհու նորոգած Ս. Սարգիս եկեղեցում: Ուշագրաւ է, որ այդ եկեղեցու մէկ ա՛յլ արձանագրութեան մէջ Սիթին նշելով, թէ նորոգել, վերաշինել է եկեղեցին իր ամուսնու միջոցներով, նրա հոգու փրկութեան համար, նաեւ աւելացնում է, որ տեղի քահանաները պէտք է պատարագ մատուցեն պատերազմում զոհուած իր հարազատի՝ Ղարիբի համար («սպասաւորք սորա հատուցին էրկու աւր պատարագ... յանուն հարագատին իմոյ կատարել Ղարիբին, սպանելոյն ի պատերազմի»)՝⁴⁰: Արձանագրութեան սկզբում նշուած է ՈՄԹ (1210) թուականը, որ հաւանօրէն եկեղեցու վերանորոգման սկզբի տարին է, մինչդեռ ինչպէս տեսանք Ղարիբը զոհուել է 1225ին, ուստի արձանագրութիւնն էլ գրուել է այդ թուականից յետոյ, թերեւս Գրիգոր եպիսկոպոսի արձանագրութեան գրութեան ժամանակ:

Գրիգոր եպիսկոպոսի անուան թուակիր վերջին յիշատակութիւնները 1232, 1233 եւ 1239 թուականներին (վերջինի ժամանակ նա արդէն մահացած էր), ցոյց են տալիս, որ եղբոր մահից որոշ ժամանակ անց նա իր անուանն է կցել ժամանակին հօր, իսկ յետոյ նաեւ եղբոր կրած Մազիստրոս պատուանունը: Այս երեք թուականների յիշատակութիւններում նա կոչուում է Գրիգոր Մազիստրոս, որ ոմանց ենթադրել է տուել, թէ եղել է այդպիսի մէկը, որպէս «Իշխան Շիրակի»՝⁴¹: Հ. Ն. Ակինեան, որ Անիի Պահլաւունիների վերջին շառաւիղներին առաւել հանգամանօրէն անդրադարձած հեղինակն է, Գրիգորին նշում է միայն նրա Մազիստրոս մականունով «Ապուղամբ եւ որդիք Գրիգոր Մազիստրոս եւ Ղարիբ»⁴² ենթավերնագրի տակ, վկայաբերելով Մարմաշէնի վերը յիշուած արձանագրութիւնը, Բագնայրի մի քանի արձանագրութիւնները, ինչպէս եւ, «Բագնայրի Աւետարանի» 1232 թ. յիշատակարանը, բայց զանց առնելով Անիի բազմաթիւ արձանագրութիւնները, որոնցից ակնյայտօրէն երեւում է, թէ Անիի արքեպիսկոպոս Աբուղամբի որդի Գրիգորը նոյն Գրիգոր Մազիստրոսն է: Պարզապէս նա Մազիստրոս է կոչուել եղբոր՝ Ղարիբ Մազիստրոսի (վերջինս

40. Նոյն տեղում, էջ 55:

41. ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 574, ՅՈՎԱՆՔԵՄԵԱՆ Գ., Խաղրակեանք կամ Պոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 8:

42. ԱԿԻՆԵԱՆ Ն., նշ. աշխ., էջ 398:

այդպէս է անուանում Մարմաշէնի արձանագրութեան մէջ) մահից յետոյ:

1232ի Զաքարեանների քեռորդի՝ Սոռասի պատուէրով գրուած «Բագնայրի Աւետարանի» գլխաւոր յիշատակարանում նշուած է, որ մատենանը նուիրուել է Բագնայրի վանքին՝ «... ի Բագնայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղւոյն Գրիգորայ, որ Մագիստրոսն ասի, վերադիտող Աթոռոյս Անուոյ...»⁴³: 1233ի Բագնայրի մի նուիրատուական արձանագրութեան մէջ կարդում ենք. «Ի թուիս ՈԶԲ (1233) շնորհիւն Գրիստոսի, ի տէրութեան տեղւոյս Գրիգորի Մագիստրոսի, որդոյ Ապուղամրի...»⁴⁴: Իսկ 1239ի Անիի նոր եպիսկոպոս՝ Ամիր Երկաթի որդի Բարսեղի արձանագրութեան մէջ ասուած է, որ քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով այդուհետեւ պէտք է պատկանի Մարմաշէնին, ինչպէս որ ժամանակին տնօրինել էր Գրիգոր Մագիստրոսը, որն իր Ղարիբ եղբոր հետ միասին թաղուած է այնտեղ. «... ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ առաջնորդ մայրաֆաղափիս Անոյ, հաստատեցաք ի մեր սեփական ժառանգութեանս զՍուրբ Ստեփանոս՝ հայրեմիք սուրբ ուխտին Մարմաշինոյ վանիցն, սիրատեսիլ Սուրբ Կաթողիկէին, զոր Մագիստրոսն Գրիգոր շնորհեալ եւ հաստատեալ էր, ընդ որոյ հովանեալ իմքն եւ եղբայր իւր Խարիփ կան հանգստարանի, որպէս եւ իւր գրեալքն բացայայտեն»⁴⁵: Այսպիսով, ոչ մի կասկած չի՛ մնում, որ Աբուղամրի որդի եւ Ղարիբի եղբայր՝ Գրիգոր Մագիստրոսը նոյն Գրիգոր Ա. եպիսկոպոսն է, որն ինչպէս Սարգիս Ա.ի մահից յետոյ Անիի Աթոռն էր ժառանգել, այդպէս էլ եղբոր մահից յետոյ «ժառանգել է» նրա պատուանունը, թերեւս նաեւ աշխարհական իրաւասութիւնները: Ուշագրաւ է, որ Գրիգորի որդիները⁴⁶ արձանագրութիւններում իրենց կոչում են «Մագիստրոսի որդի», ուստի «Մագիստրոս» թէեւ այդ ժամանակ սկզբնական նշանակութեամբ տիտղոսը չէր, բայց սոսկ պատուանուն էլ չէր, այլ աւելի շատ ազնուական տոհմականութեան բարձր չափանիշ էր արտայայտում, ենթադրելով համապատասխան արտօնութիւններ:

Վերը նշուած թրուակիր արձանագրութիւններից բացի՝ Գրիգոր եպիսկոպոսն ունի նաեւ անթուական արձանագրութիւններ Հոռոմոսում եւ Լմբատավանքում: Առաջինը նուիրատուական բնոյթի

43. ԺԳ. դարի յիշատակարաններ, էջ 179:

44. ՍԱՐԳԻՍԵԱՆ Ն., նշ. աշխ., էջ 185:

45. Դիւան..., էջ 17:

46. Բարձրաստիճան հոգեւորական՝ արքեպիսկոպոս լինելով հանդերձ Գրիգոր ամուսնացած է եղել, մի բան, որ այն ժամանակ արտառոց չէր (տե՛ս ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, Գիրք դատաստանի, Երեւան 1975, էջ 50, 329): Իսկ Գրիգորի որդի Աբուղամրի 1262ի արձանագրութեան մէջ պահպանուել է նրա մօր (Գրիգորի կնոջ) անունը՝ Մամբան (ԱԿԻՆԵԱՆ Ն., նշ. աշխ., էջ 402 եւ յաջորդ էջի ներդրելը):

է⁴⁷, իսկ Լմբատավանքում Գրիգորն ունի երկու արձանագրութիւն: Աւելի վաղ գրուածում նշում է, թէ վանքին է տուել Արթիւր, նրան ենթարկել Բուենոյ գիւղի համայնքը, իսկ բուն Լմբատավանքը կոչում էր իր «Հայրենիքը» այսինքն՝ սեփականութիւնը⁴⁸: Երկրորդ, աւելի ընդարձակ արձանագրութիւնը վկայում է, որ վանքն արդէն անցել է Գրիգորի հօրեղբայր՝ տէր Բարսեղի իշխանութեան ներքոյ: Վանքին է տրուել նաև Բարսեղի «գանձագին» Հայրենեաց Թաղք կոչուող գիւղը: Արձանագրութիւնը գրուել է մինչև 1225, քանի որ Գրիգորի եղբայր Ղարիբն այդ ժամանակ ողջ էր: Արձանագրութեան մէջ պահպանուել է Գրիգորի մօր (Աբլղարիբի կնոջ) անունը՝ Մահմիթ, իսկ վերջում նշում են Լմբատավանքի վանահայր Առաքելը եւ տանուտէր Ռուբէնը⁴⁹:

Անիի անթուական արձանագրութիւններից մէկը (Ս. Առաքելոցի գաւիթ), որ վերաբերում է քաղաքում քարոզելու եկած ու այստեղ մահացած Գանձակեցի միայնակեացի յիշատակին կատարուելիք պատարագին, նոյնպէս գրուած է Գրիգոր եպիսկոպոսի կողմից («տէր Գրիգոր»)՝⁵⁰, բայց զժողար է որոշել, այդ Աբուղամբի որդի Գրիգոր Ա.ն է, թէ նրա թուր՝ Գրիգոր Բ.ը:

47. Ըստ արձանագրութեան, Գրիգոր Հոռոմոսի Ս. Յովհաննէսին է տուել Հաւանաբար նախկինում վանքին պատկանած երեք գիւղ. հմտ. ՍԱՐԳԻՍԵԱՆ Ն. Ն., նշ. աշխ., էջ 151:

48. Սւ տէր Գրիգոր, որդի Ապուղամբի Անույ եպիսկոպոս տոի գԱրդիբ ե գԲուենոյ գերիցութիւնմ Լմբատայ՝ իմ հայրենեաց, եւ նոբա տարիմ Ա (1) պատարագ ինձ տուիմ... ԱԼԻՇԱՆ Ն. Ղ., նշ. աշխ., էջ 165, հմտ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ Ն., Լմբատավանքը եւ նրա արձանագրութիւնները, «Էջմիածին», 1960, Բ, էջ 50-57:

49. «Կամաբ բարեբարիմ Աստուծոյ այս մեր արձան անջնջելի ե յիշատակ մշտնջենաւոր տեառն Գրիգորոյ արհիեպիսկոպոսի... որ ետու նուէր յիմ հաւրեղբարն յաստուածապատիւ տեառն Բարսղի, հալալ արդեամբք ստացեալ սուրբ ոխոստ Լմբատ, զնորիմ գանձագին գեղս մեր ի յԱրդիբ, որ կոչի յանուն Հայրենեաց Թաղք, ընծայեցի զսա Սուրբ Ստեփանոսի հայրենիք մինչ ի կատարած յաւտեմնիս, յաղագս յիշատակի մերոյ եւ յարեւշատութիւն եղբար մերոյ Ղարիբի եւ հայր Գրիգորի եւ Բարսղի՝ ստացողի սոցս եւ ծնողաց մերոց: Սւ եղի լուծ սպասաւորաց սոցս ի տարիմ Զ (6) պատարագս փոխարեմ հատուցանելոյ ի տաւու Ղազարու. գերկուամ տէր Բարսղի եւ գերկուամ իմ հաւր, գերկուամ իմ մաւր՝ Մահմիթիմ...»: ԱԼԻՇԱՆ Ն. Ղ., նշ. աշխ., էջ 165, հմտ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ Ն., նշ. աշխ., էջ 56:

50. Արձանագրութեան մէջ նշուած է, որ 55 տարի անապատական եղած ոմն գանձակեցի միայնակեաց Անի գաղով ու որոշ ժամանակ անց մահանալով անուշադրութեան է մատնուել, թաղուել աշխարհականների գերեզմանոցում, բայց նրա շիրիմ դարձել է ուխտատեղի: Դրանից յետոյ եպիսկոպոսը գրում է. «Սւ տէր Գրիգոր սահմանցի գԱստուածածնի կիրակեմ արև յանուն նորա պատարագի գԲրիստոս: Ով գմամ մուտիմ ի յԱթոռուս համէ, կամ յուգել իշխե Վայեմի եւ Յուդայի չափ նգովալ եղիցիմ»: Դիւան... էջ 26: Ինչպէս տեսնում ենք եպիսկոպոսին յատկապէս հետաքրքրել է պատարագի օրը գոյացած եկամուտը՝ «մուտքը», որ պէտք է ամօրին պատկաներ:

Այսպիսով, վերը բերուած նիւթերը ներկայացնում են Գրիգոր Ա.ի բաւական լայն գործունէութիւնը, սկսած Արջոյ Առիճի վանահայրութիւնից (1213), մինչեւ Անիի ու Շիրակի արքեպիսկոպոսի պաշտօնում հանդէս գալը (1215-1233): Ինչպէս տեսանք 1239ին նա արդէն մահացել էր եւ թաղուել Մարմաշէնում, իր սիրելի եղբոր՝ Լարսեղի շիրմի մօտ: Այստեղ պահպանուել է նաեւ Գրիգորի յիշատակը յաւերժացնող հետեւեալ անթուական արձանագրութիւնը. «Շնորհիւն Աստուծոյ այս արձան մշտնջենաւոր [Գրիգ]որոյ որդոյ Արուղամբի, թողին Վահրամայ, որ հաստատեալ է ի սկզբանէ գկաթողիկէ եկեղեցի: Յիշեսցի: Ամէն»⁵¹:

Գրիգորն ունեցել է երեք զաւակ՝ Սարգիս, Աբուղամբ, Վահրամ անուններով, որոնցից առաջինը դարձել է Անիի եպիսկոպոս, բայց թէ ո՞ր թուականին է Ցօրը յաջորդել, անյայտ է: Յամենայնդէպս, 1239ին, որպէս Անիի եպիսկոպոս՝ առաջնորդ, յիշուում է Ամիր Երկաթի⁵² որդի Բարսեղը (Բարսեղ Գ.): Նա միաժամանակ եղել է Հոռոմոսի վանքին վանահայրը եւ որպէս այդպիսին տեղի արձանագրութիւններում յիշուում է 1229-1253 թուականներին, սակայն այդ ամբողջ ժամանակ Անի եպիսկոպոսը չէր: Մասնաւորապէս, մինչեւ 1233, ինչպէս վերը տեսանք, յիշուում է Գրիգոր Ա.ը, իսկ 1245ին, երբ Կոստանդին Բարձրբերդի կաթողիկոսի շրջաբերականով Հայաստան է գալիս Վարդան Արեւելցին, նրան ընդունած եպիսկոպոսների թւում յիշուում է Սարգիս Բ.ը՝ «եպիսկոպոսն Անուի»⁵³:

Եթէ առաջին արձանագրութեան մէջ՝ 1229ին, Բարսեղը հանդէս է գալիս միայն որպէս Հոռոմոսի վանահայր⁵⁴, ապա 1231ին յիշուում է արքեպիսկոպոսի կոչումով⁵⁵: Սոսկ Հոռոմոսի վանահայրը լինելու դէպքում դժուար թէ Բարսեղին արքեպիսկոպոսութեան պատիւ տրուէր: Հնարաւոր է, որ այդ ժամանակից սկսած նա Անիի երկու եպիսկոպոսներից մէկն էր: Ուշագրաւ է, որ Բարսեղի Անիում պահպանուած 1239 թ. միակ արձանագրութեան մէջ (որ նաեւ միակ արձանագրութիւնն է, ուր նա Անիի եպիսկոպոս է համարուում), նա կոչուում է առաջնորդ՝ «... Ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ առաջնորդ մայրաբաղաբիս Անույ...»⁵⁶: Դրանցից յետոյ Բարսեղի

51. И. ОРБЕЛИ, նշ. աշխ., էջ 447:

52. Երկաթը, որպէս Անիի ամիրա յիշուում է միայն մէկ անգամ՝ 1220 թ. Սարգիս Ա.ի արձանագրութեան մէջ: Պաշտօնի անուանումը յետազայում այնքան է կապուում նրա անունին, որ երբ այլեւս ամիրա չէր, դարձեալ յիշուում է ամիր Երկաթ ձևով (մասնաւորապէս՝ որդու բազմաթիւ արձանագրութիւններում), ուստի պահպանում ենք գրութեան այդ կերպը:

53. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 310:

54. ՍԱՐԳԻՍԵԱՆ Ն., նշ. աշխ., էջ 153:

55. Նոյն տեղում:

56. Դիւան..., էջ 17:

անուան հանդիպում ենք միայն Հոռոմոսի արձանագրութիւններում, որպէս վանահայր:

Այդ ընթացքում տեղի է ունենում Անիի պատմութեան ճակատագրական իրադարձութիւններից մէկը՝ 1236ին քաղաքը աւերում է մոնղոլների կողմից: Ինչպէս Կիրակոս Գանձակեցին է վկայում, բարբարոսները կողոպտում են բոլոր եկեղեցիները, կոտորում մեծ թուով քաղաքների, այդ թուում հոգեւորականների՝ «... մտեալ ի քաղաքն ... կողոպտեցին եւ զամենայն եկեղեցիս, աւերեցին ու քանդեցին զամենայն քաղաքն...: Անդ էր տեսանել... առհասարակ կոտորեալք ... քահանայն եւ սարկաւազունք եւ պաշտօնեայք եկեղեցականք...»⁵⁷:

(Շար. 1)

ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

57. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 258-259: